

ՅԻՍՈՒՍ ԱՊՐԵՑԱԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՑԱԻԵՐՈՎ

1. Յիսուս Ապրեցաւ Ժողովուրդին Ցաւերով,
Ժողովուրդին չետ, Ժողովուրդին չամար
2. “Մինչեւ Որ Ինք Ժողովուրդը Արձակէ”
3. Քրիստոնեային Կեանքը Խաչելութեամբ
Իմաստաւորուած Կեանք Մըն է
4. Խորհուրդ Խորին

**JESUS LIVED WITH THE SORROW AND THE GRIEF
OF HIS PEOPLE**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2005**

ԶՕՆ

Կը ճօնեմ այս համեստ հոգեւես
գրութիւնները բոլոր տէնջահար հոգիներուն,
որոնք կ'աղօթեն մխիթարուիլ: Ու
Յոյսով և հաւատքով կը սլանան հասնիլ
Անհասին, որովհետեւ Աստուած կը սիրէ՝
բոլոր մարդկութիւնը, և ինք եւս կ'ուզէ
ցոյց տալ իր ներկայութիւնն ու մխիթարութիւնը
մեզի բոլորիս:

--Ալպէո Նորատունկեան

ՅԻՍՈՒՍ ԱՊՐԵՑԱԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՑԱԻԲՈՎ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

“Անիկա (Յիսուս) մարդոցմէ անարգուեցաւ ու երեսէ ձգուեցաւ,
Վիշտերու տէր ու ցաւերու տեղեակ եղաւ,
Անարգուեցաւ ու Չանիկա չյարգեցինք:
Իրաւցրնէ Անիկա մեր ցաւերը վերցուց
Ու մեր վիշտերը իր վրայ առաւ,
Եւ մենք Չանիկա վիրաւորուած, Աստուծմէ զարնուած
Ու չարիքի հանդիպած սեպեցինք:
Բայց Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ,
Եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ,
Մեր խաղաղութեան պատիժը Անոր վրայ եղաւ,
Եւ Անոր վերքերովը մենք բժշկուեցանք:
Ամէնս ոչխարներու պէս մոլորեցանք,
Ամէն մէկս իր ճամբան դարձաւ,
Եւ Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը Անոր վրայ դրաւ:
Անիկա անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ,
Բայց իր բերանը չբացաւ,

~~~~~  
Անոր համար մեծերուն հետ բաժին պիտի տամ Անոր,  
Եւ հզօրներուն հետ աւարէն բաժին պիտի առնէ  
Քանզի իր անձը մահուան մատնեց  
Ու յանցաւորներուն հետ սեպուեցաւ,  
Եւ շատերուն մեղքը վերցուց,  
Ու յանցաւորներուն համար միջնորդութիւն ըրաւ:

**Եսայի Մարգարէ ԾԳ. գլուխ**

Մարդեղացեալ Յիսուս Զրիստոս բաժնեկցեցաւ, հոգեպէս և մարմնապէս  
անօթի մարդկութեան ողբերգութիւնը: Միրոյ զգացումի խորութիւնը առանց  
ցաւի ու արցունքի չըլլար: Ան տեսաւ ժողովուրդներուն կեանքը և երազանք-  
ները, զգաց անոնց երգն ու արտասուքը, զարմացաւ կղերականներուն  
կեղծարար դիւանագիտութեան և դրամապաշտութեան: Մարդ որքան որ մօտ  
ըլլայ իր երկրին ու ժողովուրդին, որքան շատ խորանայ անոնց յոյզերուն և  
խարխաբումներուն յայնժամ կրնայ զգալ անոնց կարիքները և այնքան աւելի  
կրնայ օգնել մարդկութեան: *«Ժողովուրդս վիշտի և յուսախաբութեան մէջ, կայ  
յոյս և անագնազօր ցաւի ու տառապանքի մէջ երբ տիեզերք յանկարծ  
կործանի, և ամայանայ, կայ Աստուած»:* Արտայայտուած զգացումը պէտք է

որ *անձ նակա՛ն* ըլլայ և իր հոգին թրթռալու է ժողովուրդին հոգւոյն հետ:

Յովհաննէս Մկրտիչին Բարոզնութիւնը անապատին մէջն էր:

1. ժողովուրդը անոր կ'երթար:

2. Յիսուս Բրիստոսի Բարոզնութիւնը Բաղաճնէրու, գիւղերու և տաճարին մէջ էր: Ան ժողովուրդին գնաց, որովհետեւ Ան եկած էր փնտտելու կորսուածը, գտնելու և զայն փրկելու: Յիսուս Բարի Հովիւն էր Իր ոչխարներուն, և ո՛չ վարձկան մը: Յիսուս, ժողովուրդին հետ ինքզինք ջաղախելով անոնց հոգին Ի՛ր հոգիին մէջ փոխադրեց:

Կան սիրոյ և անեսականութեան առաքինութիւններ. Գութ, ողորմութիւն, ընկերասիրութիւն, հիւրասիրութիւն և Բաջութիւն: Կան շնորհի և հաւատարմութեան առաքինութիւններ որոնք կը բղխին Աստուծոյ Որդւոյն էութեան սուրբ լոյսէն.--հեզութիւն, անկեղծութիւն, ճշմարտախօսութիւն և հաւատարմութիւն: Կան սրբութեան առաքինութիւններ՝ ժուժկալութիւն, ընդդէմ սեռային անբարոյութեան, արքեցողութեան որկրամոլութեան, ծխամոլութեան և մաքրասիրութիւն՝ իր բոլոր կիրառումներով--մարմնոյ, լեզուի և սրտի:

*«Հայ եկեղեցին պէտ՛ է երթայ ժողովուրդի՛ն և դառնայ եկեղեցի ժողովուրդով ժողովուրդին համար»* --**Արամ Ա. Կաթողիկոս:** Ա. ներսէս Ընորհալի եղած է մարդասէր և ժողովրդասէր: *«Թող վախճանն բոլոր անունք, որ անմեղները, ժողովրդասէրները կ'ախտադանով կը լռեցնեն»:* Յիսուս Բրիստոս դիմաւորեց կեանքը միշտ մեղմ տխուր ժպտով մը, երգելով, աղօթելով, առանց զգացնելու իր ներքին տառապանքները, գիտնալով որ այս աշխարհի իշխանը, ի վերջոյ պիտի սպաննել տայ Ձիւնքը: Ծատ աւելի իմաստուն բաներ ըսուած են մեր այս մոլորակին վրայ *ակնարկով, ժպտով, ջրթներով և ձեռքի սեղմումներով*, քան գիրով ու խօսքով: Աստուած մեզ ժպտով ու սիրով կը դիմաւորէ: Որպէս օրինակ՝ Յիսուսի աչքերը խորունկէն ժպտեցան Միմոն Կիւրենացիին, որ մասնակից եղաւ Իր ծանր խաչը կրելու:

Յիսուս ըսաւ աշակերտներուն. «Եկե՛ք երթանք ամառի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ և հոն քիչ մը կը հանգչինք: Որովհետեւ ժողովուրդէն շատերուն երթալ-գալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած: Հետեւաբար իրենք առանձինն նաւակ առին և գացին ամառի վայր մը: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ և տեսաւ ամբոխը, **զթաց անոնց**, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ շատ բաներ ուսուցանել անոնց:

Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի և ըսին. «Ամառի տեղ ենք, և արդէն բաւական ուշ է արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի ջրջակայ ագարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գտնելու որովհետեւ ուտելիք չունին»:

*Գո՛ւ՛մ առե՛ք*

**անոնց ուսելիքը--Մարկոս 9. 31-37:**

Յիսուսի հինգ հազարը կերակրելուն համար, ներկայ եկեղեցիները կը սարքեն ու կը կազմակերպեն եկեղեցական ճաշկերոյթներ ու պարահանդէսներ: Այսօրուան ճաշկերոյթներուն շարժառիթը *դրա՛մ ջանիլ չէ՞ արդեօք*, իսկ Յիսուսի ժողովուրդը կերակրելը *գթութիւն և ողորմութիւն էր*: Յիսուս ըսաւ աշակերտներուն. *«Եր՛է՛ տուէ՛ք անոնց ուսելիքը»*: Միթէ եկեղեցիները ձրի՞ ճաշկերոյթներ կը սարքեն: Տարին մի քանի ձրի կոչուած ճաշկերոյթներու իւրաքանչիւր սեղանին վրայ դրուած պահարանները եկեղեցւոյ ջնորհակալութի՞ւնը կը յայտնեն հրաւիրեալներուն, թէ դրամահաւաքի համար են:

Յիսուս *գթա՛ց* ժողովուրդին: Ան լացա՛ւ Ղազարոսի գերեզմանին ո՛չ թէ ցաւէն այլ վիշտէն: Յարութիւն տուաւ Հայրոսի աղջկան, որովհետեւ չկարողացաւ տեսնել անոր ծնողաց տխուր և արցունքալից աչքերն, ու թրթռացող ջրթները որ կ'աղերսէին Յիսուսի, որպէսզի ողորմի՛ իրենց: Յիսուս, Իր մարդէղացումով զգաց Իր ստեղծած մարդ արարածին ողբերգական առեւանգումը Սատանային իշխանութեամբ: Ուստի Իր մարմնական բացակայութեան ջրջանին համար կազմակերպեց եկեղեցին, որպէսզի ա՛ն դառնայ Իր տեսանելի՛ մարմնացումը: Երկրի վրայ չկայ ցաւ մը որ երկինքը չզգայ:

**Մեզմէ Բանինե՞ր կը ներկայացնենք Տէր Յիսուսը:**

Աւետարանը թափանցելու է ոչ միայն իմացականութեան, այլ մարդու ամբողջական էութեանը: Աստուածածանաչումը պարզ հետաքրքրական ժամանց մը կամ տեղեկութիւն հաւաքել ըլլալու չէ՛, այլ մարտակոչ մը: Գիտունը կը խօսի միայն իմացականութեան, իսկ Աւետարանը՝ հոգիին կը խօսի: Քրիստոս կը մխիթարէ սգաւորները և թախծալից սրտերը, յուսահատները յոյսով կը ներշնչէ և բարոյապէս ինկածները ոտքի կը կանգնեցնէ: Մուրբ Աւետարանին միջոցով Հայ ժողովուրդը ոչ միայն Աստուծոյ հետ խօսեցաւ, այլ իր ամենօրեայ ողբերգութիւնը պատմեց ու իր ցաւերը դարմանեց Անոր երկնառափ ծունչովը: Յիսուսի պատուերները ան կերաւ, իւրացուց, խառնեց իր էութեան հետ, միացուց զանոնք իր մտքի և հոգիի շաղուածքին մէջ:

Յիսուս «մարմին Եղա՛ւ», ապրեցա՛ւ և գործեց: Գիրք մը չտուաւ մարդկութեան, այլ՝ *Ինճզի՛նք* տուաւ: Ան ինճզիները ամբողջօրէն բաշխեց, ընծայեց անվերապահօրէն, առանց պայմանի, անսակարկ ու անխարդախ: Աստուած որ ինճնաբացայայտման յայտնութիւնն է, կարելի՞ է որ առաջին դարէն յետոյ դարդի Ինճզիներ յայտնելէ: Աստուած Իր գործունէութեան մէջ, ո՛չ կը դանդաղի, և ո՛չ ալ կը կասի: Յիսուս ըսաւ.

**«Իմ Հայրս մինչեւ հիմա կը գործէ»:**

Աստուած՝ Իր Որդիով կը խոնարհի, կը մարդանայ, անհասանելին հասանելի ու անտեսանելին տեսանելի կը դառնայ: Ուստի, որպէս Բրիստոնեաներ մենք զԱստուած կը ճանչնանք մի միայն մարդեղացեալ Յիսուս Բրիստոսի ապրումի՛ն մէջ: Ամենաազնիւր, ամենագեղեցիկը, ամենահզօրը և յաւերժականը՝ ինքնազոհողութեան զգացումն է: Գողգոթան փոխաբերական իմաստով՝ որպէս ինքնազոհութիւն և բարոյական տառապանքի խորհրդանիշն է:

Աստուծոյ իրագործումները մեր կեանքին մէջ, մեզի պարգեւած շնորհներն են, որոնց միջոցաւ կը կատարուին այսօրուան նուաճումները: Յիսուս իրականացուց և ըմբռնելի դարձուց Հին Կտակարանի՝ մարգարէներուն Աստուածը մարդկային հասողութեան: Իր ապրումով, նուիրումով և անձնազոհ խաչելութեամբ ճշմարտապէս ցոյց տուաւ աշխարհամարդուն Աստուծոյ իմանալի՝ նկարագիրը: Յիսուս Բրիստոսի դիրքը և անձը կեդրոնական կարեւորութիւն և արժեքաւորում ունի մարդկային իրականութենէն ներս:

Աստուած կ'արտօնէ չարը, որովհետեւ մարդուն չար արարքն իսկ Ան կրնայ բարի գործակից դարձնել:

1. Յովսէփ գեղեցիկին որպէս գերի վաճառումը Աստուած փոխակերպեց Յակոբը ապրեցնելու,
2. Մովսէսի գետ նետուիլը պատճառ եղաւ փարաւոնի արքայազուն որդի դառնալուն--Ծննդ. 45: 8, 50:20:
3. Յիսուս Բրիստոսի դատապարտութիւնն ու մահը, ամենակալ Աստուած փոխակերպեց մարդոց փրկագործութեան--Հոմ. Ը. 28:
4. Ի վերջոյ ստեղծագործութեան լրումին, երբ մարդ հասնի "Եօթերորդ Օրուան" հանգստութեան, պիտի ըմբռնէ տառապանքին ու ցաւին գոյութեան պատճառը: Վիշտը կը բանայ մեր աչքերը տեսնելու և համակուելու ուրիշին ցաւով:

Ի՞նչ է աշխարհի կառավարութիւններու մտատիպարը կամ իտէալը: Ազգերու իտէալը հիմնուած է միայն տնտեսական և նիւթական շահերու վրայ: Հետեւաբար, երիտասարդութիւնը հոգեւոր և բարոյական իտէալէ, նպատակէ, իմաստէ և յոյսէ դատարկուած կեանքը, կը փորձէ լեցնել անբնական և արտառոց արկածախնդրութիւններով: Կեանքը կը ներկայանայ գերազանցապէս իբր իտէալ, նպատակ ծրագիր, վճռակամութիւն և զոհաբերում՝ գաղափարականի մը համար: Վիկտոր Հիւկոյի և իր մարդկայնական իտէալին ազդեցութիւնը պիտի շարունակեն դարեր անվախճան: Աղօթքի և ազատութեան իտէալին հանդէպ գոյութիւն ունեցող հաւատքին մէջէն ծնաւ հայրենիքի գաղափարը: Մաջթոց կառչեցաւ իր իտէալին, որովհետեւ ապրեցաւ ժողովուրդին մէջ, ու լեռնէ լեռ, ձորէ ձոր ճամբորդեց իր աշակերտներուն հետ, ամէն դուռ թակեց, նեղութիւններու, դժուարութեանց սուկաց և հասաւ իր

նպատակին: Ինչո՞ւ հասաւ, որովհետեւ իր ժողովուրդին (ո՛չ իրեն) հաւատաբին ցա՛ւը քաջեց:

Եթէ մենք բրիստոնեայ ենք, ոչ թէ մեր անձնական շահերուն հետամուտ ըլլալու ենք, այլ այնքան յոգնած ու տառապեալ անձանց միխթարութեանը, որոնք բնաւ պիտի չփրկուին եթէ Աստուծոյ Խօսքը չփարոզուի իրենց: Մարդուն կեանքը այս աշխարհի վրայ, բարեբախտութիւններու կողքին յաճախ ենթակայ է զանազան տեսակի դժբախտութիւններու, թշուառութիւններու, և տառապանքներու: Սուրբ Նարեկացին աշխարհը վերափոխելու տառապանքով կը խռովի: Մարդկութիւնը կը տառապի այսօր, պարզապէս, որովհետեւ չուզէր ցոյց տալ ծառայասիրութեան և խոնարհութեան ոգին իր մէկ նմանին: Պիտի տառապիս, ջառցնելու համար բու և ուրիշներու ուրախութիւնը:

Քրիստոնեային կոչումը յոյս ներշնչել է յուսահատին, խաղաղութիւն՝ հոգիով տառապողին, միխթարութիւն՝ սգաւորին, որովհետեւ տառապող սէրը հզօրագոյն ուժն է քրիստոնեային: Գիտութիւնը ի՞նչ կրնայ ընել տառապող հոգիներու համար առանց Աստուծոյ սիրո՞յ գաղափարին: «Նեղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տոկունութիւնը՝ յոյս»--Հոով. Ե.5: «Ձրլլայ որ ոեւէ մէկը իր համոզումներուն մէջ խախտի ներկայ նեղութիւններուն պատճառով: Որովհետեւ դուք ջատ լաւ գիտէք, թէ այդ նեղութիւններուն մէջ ասրելու կոչուած ենք: Երբ տակաւին ձեր մօտ էինք, սկիզբէն չ'ըսի՞նք ձեզի՝ թէ նեղութիւններ պիտի կրենք, ինչպէս որ եղաւ ահա, և տեսաք»--Ա. Թեա. Գ. 3-4:

Յիսուս Քրիստոսի կեանքին, «բազում իրերու աղերսը իրարու մէջ», կը տեսնենք Անոր Մարդեղութեան վերջին շաբթուան մէջ, Իր կատարած Սուրբ Հաղորդութեամբ: Ան ըսաւ. *«Ասիկա կատարեցէք Ձիս յիշելու համար»*: Հաւատացեալներ ազատ են յիշելու Յիսուսի կեանքի դրուագներէն ա՛յն ինչ որ զիրենք հրապուրած և բաջալերած է: Իմ համեստ ու երկրպագական մտածումս կ'արաջնորդէ զիս Մարդեղացեալ Յիսուսի հոգեկա՛ն տառապանքին, երբ Ան գործեց հրաջֆներ, բժշկութիւններ, աննախընթաց երկնայա՛յտ փարոզութիւններ: Յիսուս բացա՛ւ երկնակամարի շղարջը և ցոյց տուաւ ջօջափելի ու տեսանելի Սէր ու Բարի Հայր երկնաւորը, բայց աւա՛ղ որ Մովսէսի աջակերտները, Փարիսեցիները, չհասկցան ու ոմանք ալ հասկնալ և ճանչնալ չուզեցին Աստուած Ճշմարիտը:

Յիսուս յաճախ նախաձայնեց իր ձերբակալութիւնը, անարգուիլը, և սպաննուիլը: Յիսուս, բացատրելու համար Իր, թէ՛ հոգեկան և թէ՛ մարմնական չարչարանքները, ըսաւ աջակերտներուն.

*«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ միայն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ ջատ արդիւնք կու տայ: Ով որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ով որ այս աշխարհի մէջ կ'ատէ իր անձը՝*

**պիտի պահէ զայն յաւիտենական կեանքի համար: Եթէ մէկը ինձի ծառայէ՝ իմ ետեւէս պէտք է զայ. և ուր որ ես եմ, այնտեղ պէտք է ըլլայ նաև իմ ծառաս. Եթէ մէկը ինձի ծառայէ՝ Հայրս ալ պիտի պատուէ զայն:--Յով. ԺԲ. 24-26:**

Յիսուսի վերոյիջեալ խօսքերուն մէջ կան զանազան պատուիրաններ, որոնք Ի՛նք կատարեց ու կը փափաքի նաեւ, որ իր աշակերտները և զինք սիրողներն ալ կատարեն. հետեւի՛ն Իրեն և նուիրե՛ն իրենց կեանքը ու գործակցին Իր հետ, ուրանալով իրենց անձը: Երբ Յիսուս վերջացուցած էր վերջին ընթրիքը, սապէս կը կարդանք. «Եւ մինչ անոնք կ՛ուտէին, Յիսուս հացը առաւ, օրհնեց, կտրեց և բաժնեց աշակերտներուն, ըսելով. **«Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա իմ մարմինս է»:** Յիսուս Իր ազա՛տ կամքով կտրեց հացը ու տուաւ Իրեն հետեւող աշակերտներուն: Երբ ամէն բան ըրաւ, անկէ յետոյ Ան ըսաւ աշակերտներուն.

**«Ասիկա կատարեցէ՛ք Ձիս Յիշելու համար»:**

Ուստի թե՛ վերի համարները և թե՛ Յիսուսի վերջին պատուերը կը նշանակեն, թէ մե՛նք եւս, որպէս աշակերտները Յիսուսի և Ձիւնք սիրողները, պարտաւոր ենք ուրանալ մեր անձերը, յանձն առնելով կրել նեղութիւն և չարչարանք, նոյնիսկ նահատակութիւն.

**«Եթէ ցորենի հասիկը հողին մէջ իյնալով չմեռնի»:**

Մեր կեանքին մէջ պարտ ենք այժմեականացնել *յիշատակը* և *պատուերը* Յիսուս Փրկչին, որ ըսաւ. **«Ասիկա կատարեցէ՛ք Ձիս Յիշելու համար».** Ո՛չ թէ միայն կրկնելու ենք Սուրբ Հաղորդութեան արարողութիւնը, այլ՝ յանձն առնելու ենք նոյնիսկ *կոտորուիլ* և *անարգուիլ* Անոր *բեկբեկուելու* Խորհուրդին նման:

Մեզմէ Բանի՞ հոգի սիրայօժար կերպով պատրաստ է մասնակցիլ այս մարտահրաւեր՝ չարչարանքներուն: Յիսուս Զրիստոսի իւրաքանչիւր պատուերը անձնագոհութեան կոչ մըն է, որ պատուիրեց Իրեն հետեւողներուն. **«Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք, բայց Բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»--Յով. ԺԶ.33:**

**«Ներկայի մեր կրած այս թեթեւ նեղութիւնը արտակարգօրէն գերազանց և յաւիտենական փառք մը կ՛ապահովէ մեզի»--Բ Կորն. Դ. 17:**

## “ՄԻՆՉԵՒ ՈՐ ԻՆՔ ԺՈՂՈՎՈՒՐԳԸ ԱՐՁԱԿԷ”

Յիսուս, ժողովուրդը (5 հազարը) կերակրելէն յետոյ, կը ստիպէ աշակերտները որ նաակ ելլեն և Իրմէ առաջ երթան լիճին միւս կողմը, *«մինչեւ որ Ինք ժողովուրդը արձակէ»*։

Յիսուս ինչո՞ւ **“երթաք բարով”** մը ըսելով ժողովուրդին, աշակերտներուն հետ միասին չի վերադառնար Իր գիւղը, այլ կը ծամբէ աշակերտները և Ինք կը մնայ ժողովուրդին հետ, մինչեւ բոլորն ալ վերադառնան իրենց բնակարանները։

Յիսուս Զրիստոս միայն ժողովուրդը կերակրելու չէր եկած, այլ նաեւ ժողովուրդին ցանձրը, մարմնական ու հոգեւոր վիջտերն ու կսկիծներն ալ ամոհելու և սփոփելու։ Յիսուս երբ տեսաւ բազմահազար ժողովուրդ, որ եկած էր մխիթարուելու և բժշկուելու, **զթա՛ց անոնց** և մասնակի՛ց եղաւ անոնց ցաներուն ու զգաց անոնց վիջտերը։ Ան չհեռացաւ ժողովուրդէն հանգչելու և ինքզինք հոգալու, այլ կեցաւ ժողովուրդին մէջ։ Բժշկեց զանոնք իրենց ցաներէն, մխիթարեց հոգեկան սգաւորները, հաւա՛տք ներշնչեց թերահաւատներուն, քաջալերեց սկարները և յուսադրեց տարեցները։ Ծատ հաւանական է գրկեց բազմաթիւ երեխաները և օրհնեց զանոնք ու բացաւ աչքերը կոյրերուն ու նաեւ անհաւատներուն։ Ան մինչեւ ուջ մայրամուտ կեցաւ իր ժողովուրդին հետ մինչեւ որ բոլորն ալ մխիթարուած ու բժշկուած մեկնեցան ուրախութեամբ։

Այս անբացատրելի յոգնութենէն և սպառումէն յետոյ Յիսուս չզնաց հանգչելու, այլ եղաւ լեռ աղօթելու ու խօսելու չօր Աստուծոյ հետ։ Ինչո՞ւ, որովհետեւ Իր սպառած մարմինն ու ճոգին, կարիքը ու նէին զօրանալու և ամրանալու charge ըլլալու։ Յիսուսի աշակերտող մը պարտ է գիտնալ, թէ իր իւրաքանչիւր բարիքը, եթէ իր հոգիէն կամ քսակէն արժէք մը չի իլեր, ուրեմն անոր ըրած բարիքը որեւէ արժէք չի՛ ներկայացներ։ Կարդանք դէպք եղելութիւնը, ուր կին մը գաղտնօրէն դպչելով Յիսուսի հագուստին կը բժշկուի իր ցաներէն։-

«Կին մը կար, որ տասներկու տարիէ ի վեր արիւնահոսութենէ կը տառապէր։ Անկէա բժիշկներու ձեռքէն ջատ նեղութիւն քաջած էր, իր ամբողջ ունեցածը վատներ էր, բայց օգուտ չէր տեսած, ընդհակառակը, հիւանդութիւնը աւելի վատթարացեր էր։ Լսելով Յիսուսի մասին, ամբոյսին մէջէն և Յիսուսի ետեւէն եկաւ և դպաւ Անոր հագուստին։ Որովհետեւ ինքիրեն կը խորհէր ու կ’ըսէր. *«Միայն դպչիմ Անոր հագուստին և պիտի բժշկուիմ»*։

Անմիջապես անոր արիւնահոսութիւնը դադրեցաւ, և ինք մարմնին մէջ զգաց որ իր հիւանդութենէն բժշկուեցաւ: **Նոյն պահուն Յիսուս զգաց թէ իրմէ զօրութիւն մը դուրս եկաւ.** ամբոխին մէջ ետեւ դարձաւ և ըսաւ. *«Ո՞վ դպաւ հազուատիս»:* Աջակերտները ըսին իրեն. «Կը տեսնես որ ամբոխը բեզ կը հրմշտկէ, և դուն կ'ըսես, "ո՞վ դպաւ հազուատիս»:

Յիսուս չորս կողմը կը նայէր՝ տեսնելու համար թէ ո՞վ ըրաւ: Կինը, քանի գաղտնի դպած էր Յիսուսի, և գիտնալով թէ ի՞նչ պատահած էր իրեն, վախէն դողողալով եկաւ ինկաւ Անոր ոտներուն առջեւ և իրականութիւնը ըսաւ. Յիսուս ըսաւ անոր. *«Աղջիկս, հաւատո՞ղ բեզ փրկեց խաղաղութեամբ գնա և բժշկուէ՛րք քաւերէք»*.-Մարկոս Ե. 25-34:

Վերոյիշեալ դէպքը մեզի ցոյց կու տայ թէ Յիսուս իր **աւելցումէն** չէ՛ որ կը բժշկէ հիւանդները կամ կ'ողորմի վշտահարներուն, այլ Իր իսկակա՛ն և իմանալի զօրութենէ՛ն կը բաշխէ և կը պարգեւէ բժշկութիւն, մխիթարութիւն և մեղքերու թողութիւն: Եթէ չենք տեսած Յիսուսի Անձէն բուրող, հոգեկան և մարմնակա՛ն բաղասանը, նայի՛նք Գողգոթայի Խաչեցեալ Յիսուսին: Այն Անձը որ վերցուց մարդկային ցաւերը և ջնորհեց մխիթարութիւն ու մեղքերու թողութիւն, Իր վերջին հաշտարար աղօթքը եղաւ.

**«Հա՛յր, ներէ՛ անոնց,  
որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն»:**

Յիսուսի սրբարար Խաչելութիւնը ո՛չ թէ Հին Կտակարանին զոհագործումներու հետեւողական արարք մըն էր, այլ Իր ցաւատանջ Խաչելութիւնը, կենդանի՝ ցուցադրութիւն և ապացոյց մըն էր, թէ Աստուած **սէ՛ր** է ու կը սիրէ բոլոր անոնք որ զղջումով կը վերադառնան Հայրական ծոցը:

Ի՞նչ կը խորհին ներկայ Զրիստոնեաները երբ կը նային Գողգոթայի սարին վրայ այն Սուրբ Խաչեցեալին, որ ցոյց տալու համար սիրոյ Աստուածը բեզի և ինծի, անձնուրացօրէն յանձնեց ինքզինք վկայելու և հաւաստելու սիրոյ առաքելութիւնը: Մեզմէ քանիներ, աստուածային սոյն առաքելութիւնը կը կատարենք մեր ամենօրեայ գործընթացի մէջ:

Վերջին ընթրիքին, Յիսուս երբ բաշխեց իր Մարմինն ու Արիւնը Ձինք սիրողներուն, Ան ըսաւ. Ըրե՛ք այս. «Ձիս յիշելու համար»: Ուստի, ոչ միայն յիշենք Յիսուսի տառապանքն ու ծառայութիւնը միայն մտածումով, այլ իրագործենք Անոր Յիշատակութիւնը, մե՛ր ալ զոհողութեամբ և անձնուրացութեամբ: Ա՛յս է ճամբան Յիսուսի աջակերտութեան: Առնել Անոր լուծը

մեր վրա՛յ և ըլլալ գործակիցները և Խաչակիցները Յիսուս Փրկչին: Ըսելը դիւրին է, իսկ կատարելը ամբողջ կեանք մը կ'արժէ:

Մարդիկ, ընդհանրապէս իրենց կարգ մը ծրագիրները յաջողցնելու և յաղթանակելու համար կարգ մը փորձեր կը կատարեն ու յետոյ յուսահատելով իրենց գաղափարականէն ու ծրագրէն վազ կ'անցնին: Բայց ո՛չ մեր Տէրը Յիսուս: Ան չմոռցաւ Իր Առաքելութիւնը, Ան չյուսահատեցաւ հալածանքներէ, Ան շարունակեց ականջ տալ մեր իւրաքանչիւր աղերսին և աղօթքին, Ան չմերժեց Ձինք ուրացող Պետրոս աջակերտը և Իրմէ փախչող աջակերտները, որոնք իրենց վախին պատճառաւ, հեռո՛ւն կայնած կը դիտէին խաչեցեալ Վարդապետը:

Յիսուս ինչո՞ւ չնզովեց Իր անհաւատարիմ աջակերտները, ինչո՞ւ երեւցաւ այդ վախկոտներուն և Ձինք լքողներուն Իր յաղթական յարութենէն վերջ: Ինչո՞ւ երեւցաւ նոյնիսկ թերահաւատ Թովմաս աջակերտին, երբ ան ամբարտաւան կերպով կ'ըսէր իր ընկեր աջակերտներուն.

**«Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ  
Անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն  
տեղերը և ձեռքս չդպցնեմ Անոր կողին՝ չեմ հաւատար»:**  
--Յով. Ի. 25:

Ոչ միայն Փարիսեցիները չհաւատացին Յիսուսի առաքելութեան, աննման հրաշագործութիւններուն, այլ նաեւ Անոր աջակերտները, որոնք հետեւած էին Իրեն ու ականատես եղած Անոր Պայծառակերպութեան, սիրոյն, խոնարհութեան և ծառայութեան: Յարուցեալ Յիսուս չյուսահատեցաւ, այլ կեցաւ Իր աջակերտներուն բով ու համբերեց անոնց մարմնակա՛ն տկարութիւններուն մինչեւ երկինք Համբարնալը: Յիսուս Քրիստոս չ'արձակեց Իր աջակերտները մինչեւ որ բոլո՛րն ալ հաւատացին որ Ի՛նքն է Աստուծոյ Ոծեալը և աշխարհի Փրկիչը: Յիսուս այսօր եւս կ'ըսէ համայն մարդկութեան.

**«Մատդ բեր՝ հո՛ս դիր և տե՛ս ձեռքերս.  
բե՛ր ձեռքդ և դպցուր կողիս և անհաւատ մի՛  
ըլլար, այլ՝ հաւատացեալ»:**

Արդեօք, մենք եւս պիտի կարենա՞նք ըսել նման Թովմաս աջակերտին.

**«Տէ՛ր իմ և Աստուա՞ծ իմ»:**

**Դեկտեմբեր 1, 2004  
Թորոնթօ**

## ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԽԱԶԵԼՈՒԹԵԱՄԲ ԻՄԱՍՏԱԻՈՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸՆ Է

Յիսուս ամպածրար բարձունքներու վրայ չտուաւ իր պատգամները, Մինային կայծակներն ու եղիայի վրէժխնդիր սուրը չեղան իր գէնքերը, այլ հեզութիւնը, բարութիւնը, սրբութիւնը, արդարութիւնը, զոհաբերութեան ոգին, որոնցմով ապրեցաւ, զորս քարոզեց և նուիրագործեց իր Խաչելութեամբը: Խաչին վրայ Յիսուս հանդիպեցաւ սեւ ուժերու՝ անձնասիրութեան, ատելավառ կիրքերու, և յաղթեց անոնց:

Խաչեցեալին ջուհին տակ և Յարութեան լոյսին մէջ ծաղկեցաւ Քրիստոնէական քաղաքակրթութիւնը և շնորհիւ բոլոր դարերու հաւատացեալներու երանդուն պայքարին: Հաւատացեալին կեանքը խաչելութեամբ իմաստաւոր-լած կեանք մըն է: «Խաչին ճառը (չարչարանքը) յիմարութիւն է, իսկ մեզի՝ փրկուածներուս համար՝ Աստուծոյ զօրութիւնը և յայտնութիւնը»--Ա. Կորնթ. Ա. 18: Յիսուսի «Խաչելութիւնը տեսանելի իրողութիւններէն դէպի անտեսանելի իրողութիւններ տանող վերելքն է որու միջոցով մարդու միտքը կը ճախրէ զգայական աշխարհէն վեր և կը դպչի երկնայինին, աստուածայինին հետ»--Ս. **Աթանաս Աղեբսանդրացի** (293-373): Խաչին տառապանքը Խորհրդանշանն է ամբողջ Քրիստոնէութեան, Քրիստոսի քարոզած բոլոր վսեմ սկզբունքներուն:

Մարդիկ ցաւէն, տառապանքէն խոյս կու տան, Խաչէն կը փախչին, ու հաճոյքի և երջանկութեան ետեւէն կը վազեն: Խաչին յաղթանակը յարութիւնն է, յախտնական կեանքի խոստումն է: «Ով որ իր խաչը չ'առնէր ու Իմ ետեւէն չի գար՝ (that is, cleave steadfastly to Me, conforming wholly to My example in living and if need be in dying also), արժանի չէ ինձի» ըսաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս--Մատթ. Ժ. 38: Խաչը դուրս բերելու է մետաղէն ու քարէն ու դնելու է մեր սրտին ու հոգիին մէջ:

«Հրեաներ հրաջք կ'ուզեն, իսկ յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք (ոչ թէ Խաչը), որ գայթակղութիւն է հրեաներուն համար և յիմարութիւն՝ հեթանոսներուն»: Կ'ըսէ Պօղոս առաքեալ--Ա. Կորնթ. Ա. 22: Յիսուս Իրեն հետեւող ոեւէ մէկուն նիւթական վայելք չի խոստանար, հապա Ան կ'ակնկալէ որ անոնք Խաչը վերցնելով Իրեն հետեւին: Խաչը և տառապանքը մեզ կը կանչեն աստուածագիտութեան լոյսին: «Հաշտուելու համար նեղութեան ու վշտի գաղափարին հետ, սորվելու համար ցաւին խորունկ փիլիսոփայութիւնը, փուշերուն մէջ տեսնելու համար խոցոտուած երջանկութիւնը, ամօթահար փառքը, գամուած սէրը և մահուան ստուերին ներքեւ կեանքին փթթումը, նայեցե՛ք Խաչեցեալին»-- **Վեր. Առաքել Կ. Պետիկեան (Գիսակ) 1860-1902:**

Խաչեցեալին ճառագայթները հակադրեցին Մազտէականութեան կրակը: Դիցապաշտ Հայաստան խոնարհեցաւ Խաչեցեալին առջեւ: Եկեղեցին ոչ թէ գետնէն վեր սլացող, այլ հողին փարած, փռուած դիրքով խաչքար է: Եկեղեցին ինքզինք նոյնացնելու և ծառայելու է իր ջուրջիներուն: Հազարաւոր Խաչքարեր, Նորմանտիի ծովափին (Համաջխարհային Երկրորդ Պատերազմին), կը խորհրդանշեն վրէժ, կատաղութիւն ու ոճիր, իսկ վանքի մը առջեւ գտնուող խաչքարը կ'իմաստաւորէ անձնագոհութիւն, թողութիւն ու սէր:

### ԽԱՉՔԱՐԵՐԸ

Ձը գիտեմ ինչո՛ւ, դեռ պատանեկիկ,  
Համբուրում էի խաչքարերն ա՛յնպէս,  
Երբ մայրիկիս հետ ես, ոտաբոպիկ,  
Վանքի սարն էի իջնում գառի պէս:

Հիմա էլ նրանց համբուրում եմ դեռ,  
Բայց հիմա գիտեմ, թէ ինչո՛ւ համար.  
Ես համբուրում եմ ո՛վ նախահայրեր,  
Զարից լոյս կերտող ձեր ձեռքը ճարտար:

Որ վայրի ու բիրտ ժայռերի վրրայ  
Ոգու տարերքն է հրաջագործել  
Եւ համբուրելով սուրբ հետքը նըրա՛ն  
Անմահութիւնն եմ համբուրում ես ձեր...

--Յովհաննէս. Ճիրագ

Խաչքարերը խորհրդանիշ են: Անոնք լեզու ունին, խօսք ունին: Զաղափազէտներ եկեղեցիներու և խաչքարերու ներկայութեամբ կը փաստեն հայկական ներկայութիւնը Թուրքիոյ մէջ: Բոլոր այս հայ ներկայացուցիչները որքա՞ն հաւատք կ'ընծայեն Զրիստոսի եկեղեցոյ իսկութեան:

Խաչեցեալ Յիսուս Զրիստոսի արիւնը, հոսելով Խաչն ի վար, տարած-  
ւեցաւ երկրի վրան և ուրուագծեց Սուրբ Եկեղեցիին ընթացքը և ուղին:  
Յիսուսի խաչուիլը կը ներկայացնէ ո՛չ թէ Օրէնքէն եղած արդարութիւնը, այլ  
Խաչեցեալի՛ն *սիրո՛յ* զոհողութիւնը: «Խաչեցեալը բերաւ յարութիւնը,  
խաչեցեալէն ծնաւ յաւիտենական կեանքը որ դարձաւ յաւերժալոյս յաղթու-  
թիւններու խորհրդանիշը»: Խաչուի՛լ նեղութիւն փաշտել և տառապիլ՝ բանա-  
լին է հասկնալու Զրիստոսի կեանքը:

Խաչելութիւնը ճանապարհն է ոչ թէ մահուան, այլ՝ հաւատարմութեան,  
յաղթանակի, և յարութեան: «Բոլոր կրօններու մէջ սիրոյ գաղափարը կայ,

բայց միայն Զրիստոնէութեան մէջ Խաչուիլ՝ անձնագործութիւն կայ»:  
«Զրիստոնէաներ՝ մի՛ պատերազմի՛ք թուրով և հրացանով, այլ չարչարանքով  
և խաչուելով»:  
*«Այ մէկ քրիստոնէայ կարող է ըսել, թէ ինքն քրիստոնէայ է  
առանց խաչը ջալակելու»* --**Գորեգին Ա. Կաթողիկոս:** Զրիստոնէան, ո՛չ  
միայն ջուրով մկրտուելու է, այլ նաեւ անարգանքով և հալածուելով,  
որպէսզի կարենայ կոչուիլ գործակիցը իր Փրկչին Յիսուս Զրիստոսի: Ան  
ինքզինք ամբողջօրէն բաշխեց, ընծայեց անվերապահօրէն, առանց պայմանի,  
անսակարկ ու անխարդախ: Յիսուսի գերեզմանէն իր սկիզբը առած այդ Լոյսը  
կը շարունակէ ցարդ տարածուիլ ու թափանցել մեր խաւար հոգիներէն ներս:  
որքան խաւարակուռ ըլլայ գիշերը, պիտի չ՛ուշանայ այգալոյսը:

***«Ան մեր հիւանդութիւնները իր վրայ առաւ  
և մեր ցաւերը կրեց»* --Մատթ. Ը. 17:**

Հիմնական խարխիսն ու ներշնչարանը կը կազմէ Յիսուսի Մարդեղութեան  
միսթիֆը: Գերբնական ձայնը որ խարխափումիդ և խաւարին մէջ՝  
կեանքիդ ուղղութիւն կու տայ, Յարուցեալ Տէր Յիսուսն է: Արեւը որ կ'այգա-  
լոյսէ, նման յոյսի, պիտի սրբէ խաւար մթութեանդ հիասթափութիւնը և  
պատրանաթափութիւնը: Պօղոս առաքեալին կեանքը վերջացաւ աննշան  
խաւարապատ մթութեան մէջ, սակայն իր Բարոգութեան բարձրադաղակ ջահը  
կը լուսաւորէ անհամար խաւարամիտ կեանքերը: Արդարեւ յոյսը, քրիստոնէա-  
կան հասկացողութեամբ, հաւատքին ներքին ուժն է մարդուս մէջ, որ զայն կը  
մղէ ներկայէն նայելու ապագային ու խաւարին մէջէն տեսնելու համար լոյսը:  
Հաւատացեալները վառելու (զոհելու) են իրենց կեանքերը որ անյայտանայ  
խաւարը:

Լուսադէմին, գիշերային խաւարը փարատող առաջին լոյսերուն հետ,  
համամարդկային պատմութեան թաւալքը կանգ առաւ պահ մը, ջունչը բռնած  
հետեւելու համար այն ողբերգութեան որ կը ներկայացուէր Երուսաղէմի նեղ  
փողոցներուն մէջ, ուր Նագովրեցի Մարգարէն ջալակած ծանր խաչ մը  
դանդաղօրէն կը ֆալէր:

Զերմութիւն և խաւարի փարատումը գոյանալու համար, կանթեղը՝  
ինքզինք պարտ է սպառել: Զրիստոնէական լոյսէն առաջ, մարդկութիւնը  
մութի մէջ կը խարխափէր և ահա ծագեց Աստուածային լոյսը: Լոյսը մարմին  
եղաւ, ու հալածեց խաւարը, Յիսուս ըսաւ. *«Ես եմ Լոյս աշխարհի»*: Յիսուսի  
Յարութիւնը Լոյսի՛ յարթանակն է խաւարի վրայ, Անմահութեան զօրութիւնն  
է մահուան վրայ, յաւերժական կեանքի Իշխանութիւնն է մեռելութեան վրայ,  
Սիրոյ յարթանակն է ատելութեան վրայ, և Բարութեան յարթութիւնն է  
չարութեան վրայ:

Հազար մեղք և բիւր ամօթ բոլոր այն հոգեւորականներուն, որոնք  
Յիսուսի Եկեղեցւոյ դարաւոր և պանծալի պատմութիւնը կը փորձեն

խելաթիւրել և աստուածաշնորհ փառքը նսեմացնել: Պօղոս առաքեալ կը գրէ Գաղտիոյ եկեղեցւոյ ըսելով. «*Կը գայրմանամ որ Զրիստոսի ջնորճով ձեզ կանչողէն այդպէս ջուտով կը փոխուի՞մ կը դառնամ ուրի՞շ և ևստարանի, չկա՛յ ուրիշ Անտարան, բայց կան ոմանք, որ տակնուվրայ կ'ընեն ձեզ և կ'ուզեն նենգափոխել Զրիստոսի Անտարանը: Եթէ նոյնիսկ մենք կամ երկինքէն հրեշտակ մը և ևստարանէ ձեզի և ելի քան ինչ որ մենք և ևստարանեցինք ձեզի՝ նզովեա՛լ ըլլայ: Ինչպէս նախապէս ըսինք, հիմա ալ դարձեալ կ'ըսեմ. «Եթէ մէկը և ևստարանէ ձեզի և ելի քան ինչ որ ընդունեցիք դուք՝ նզովեա՛լ ըլլայ»: Արդ, մարդո՞ց հաճելի պիտի ըլլամ թէ Աստուծոյ, կամ մարդո՞ց հաճելի ըլլալ կը ջանամ: Եթէ ջանայի դեռ հաճելի ըլլալ մարդոց՝ Զրիստոսի ծառայ պիտի չըլլայի»-Գաղա. Ա. 6-10*

Չորրորդ դարէն սկսեալ հեթանոս և յոյն հաւատալիքներէն կարգ մը գաղափարներ մուտք գործեցին եկեղեցիներէն ներս և կարգ մը Անտարանի պատուերներուն վրայ պատուաստեցան: Օրինակ.--

- ա. "Աստուածամայր" և "միջնորդութիւն" բառը որ արգիլուած է Անտարանին մէջ: Մինչեւ չորրորդ դար, Ս. Մարիամ կը կոչուէր **Տիրամայր**:
- բ. Այժմ, իւրաքանչիւր յարանուանութիւններ իրենց յատուկ վարդապետութիւնները ունին, որոնք սուրբ Անտարաններուն մէջ չեն արձանագրուած, ուստի պատճառ եղած են որ իւրաքանչիւր եկեղեցի իր բոյր եկեղեցին նզովէ... ու բաժնուի:
- գ. Պիւթաբորեան "հոգւոյ անմահութեան" գաղափարը, որ յոյն իմաստասիրութենէն սարդած է քրիստոնէութեան մէջ: Սոյն պատճառաւ մեռնողներու հոգիները երկինք գացած կը կարծուին ըլլալ կամ այդպէս կը հաւատանք, փոխանակ հաւատալու **մեռելոց Յարութեան**: Եւ ասոնց նման ինչե՛ր:

Եկեղեցին կանչուած է դառնալու ժողովուրդին խիղճը, ընկճուածներու պաշտպանը, Անտարանի՛ յաւիտենական քարոզիչը և դժուարութեան ժամանակ մխիթարողը: Որովհետեւ Զրիստոնէական կրօնը Գերբնականին ներկայացուցիչն է երկրի վրայ: Զրիստոս Իր զոհաբերութեամբ կը ցնցէ մարդկութեան գիտակցութեան խիղճը: Մարդկութեան հոգին ու խիղճը ցնցելու նպատակով Յիսուս Զրիստոս կը զոհաբերէ Իր Անձը: Ազգ մը, ժողովուրդ մը որ Աստուծոյ չի հաւատար, խղճի ձայնին չի հաւատար, բարոյական արժէքներու չի հաւատար, կը ներքէ, կը դառնայ գազանաբարոյ վոհմակ մը, զոր ոչ մէկ երկրաւոր իշխանութիւն կարող է կարավարել: Արդարութիւնը մարդկային խղճին ամենասուրբ զգացումն է: Ինչո՞ւ մերօրեայ մարդը կը սիրէ աղմուկը: Մէ՛կ պատճառով. **որ չլսէ իր խղճին ազդարարութիւններն ու մտրակումները**: Ան ջուարած է ու չի գիտեր թէ ի՛նչ կ'ուզէ, ինչո՞ւ տխուր է և ինչո՞ւ իր մէջ անդնդախոր պարապութիւն մը կը բացուի: Զրիստոնէան ճանչցուելու է իբր բարեսիրտ և կարեկցող փոքրին, խոնարհին, և աղքատին:

Յիսուս Զրիստոսի խոնարհիլը՝ խոնարհումն էր Աստուծոյ Միրոյն, որ յայտնուեցաւ Մարդեղեղացեալին կեանքով:

Զրիստոս՝ թէև երկրի վրայ շատ կարճ կեանք ունեցաւ, բայց Իր օրինակելի խոնարհութեամբ, ու մանաւանդ իր օրինակելի աղփատութեամբ նուաճեց երկիրն ու երկինքը:

Յիսուսի կեանքը գերազանց օրինակն է խոնարհութեան և անձնագոհութեան: Խոնարհութիւնը քրիստոնէական այն չֆնաղ առաքինութիւնն է, որով անհատ մը իր անձին գիտակցութիւնը ունի: Ան կը գիտակցի թէ ի՛նչ որ ունի, ի՛նչ որ է, Արարչին պարգեն է, Աստուծոյ շնորհին է:

Խոնարհութիւնը շփոթելու չէ նուաստութեան հետ, ստորնութեան և վախկոտութեան հետ:

Ս. Մեսրոպ Բայացուց Աստուածաշունչը որպէսզի եկեղեցին իմաստաւորէ զայն: Առանց իմաստաւորելու հաւատքը՝ կրօնքը, մեռած ուժ մը, ու եկեղեցին անիմաստ պերճանք մը պիտի մնային: Ա՛յս էր անտարակոյս Մեսրոպի համոզումը: Ս. Ծննդեան տօնէն ճառագայթող զգացումներով ու աստուածարձակ լոյսով իմաստաւորել հաւատքը: Տօնին թուականէն աւելի կարեւորն ու էականը Տօնը ի՛նքն է: Զարոզչութիւնը կարեւոր տեղ ունէր եկեղեցւոյ մէջ սկզբնական տարիներուն, իմաստաւորելու համար հաւատքը: Հեթանոսները Յիսուս Զրիստոսի գիտութեան բերելու համար: «Առանց Աետարանի կենդանարար աղբիւրի՝ սուտ է ամենայն Զրիստոնէութիւն: Մեր ազգին բարոյապէս ամբանալուն համար հարկաւոր է կարդալ Աետարանը, ուրեմն և հարկաւոր է թարգմանել նրան ժողովրդական նոր և կենդանի հայախօսութեամբ»:

ՉՈ-րդ դարու հայութիւնը այլևս լոկ ժառանգական ու պարտադրուած Զրիստոնեայ չի կրնար մնալ՝ շարունակել, այլ պէտք է **իմաստաւորուած և արժէքաւորուած** հասկացողութեամբ ըլլայ: Որուն Աետարանը կու տայ «վերածննդ մարդ» մակդիրը--Յիսուս: Հաւատացեալին կեանքը Խաչով (անարգանքով և հալածանքով) իմաստաւորուած կեանք մըն է: Յիսուս ըսաւ.

**«Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք,  
բայց քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես  
յաղթեցի աշխարհին»--Յով. ԺԶ. 33:**

**Դեկտեմբեր 4, 2004  
Թորոնթօ**

# ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ

--Խաչատուր Տարոնեցի

Յիսուս Զրիստոսի երկրային կեանքը կը հասկցուի Իր Ա. Ծնունդի, (մարդեղութեան) և Ա. Խաչելութեան խորհուրդին ընդմէջէն:

1. «Այն յայտնութեան խորհուրդին, որ ի յաւիտենից պահուած էր լուծեան մէջ, իսկ այժմ յայտնուած է ... մշտնջենաւոր Աստուծոյ հրամանին համաձայն ... հաւատքի հնազանդութեան համար»--Հոով. ԺԶ.24-25
2. «Ճանչնալու համար Աստուծոյ խորհուրդը ի Զրիստոս Յիսուս, որուն մէջ պահուած են գիտութեան և իմաստութեան բոլոր գանձերը»--Կողոս. Բ.2-3:
3. «Այս խորհուրդը մեծ է, բայց ես կը խօսիմ Զրիստոսի և Եկեղեցիին վերաբերեալ»--Եփես. Ե. 32

Հերովդէս Ա-ին կայծակնային հարուածով փորձեց վերջ դնել Յիսուսի կեանքին: Երեսուն տարի ետք, վերստին մէջտեղ կու գայ Յիսուս: Զայն արծարծողն է Յովհաննէս Մկրտիչ Յորդանան գետի ափին: Յովհաննէս Մկրտիչ որ պրծած էր մանուկներու կոտորածէն, կը գլխատուի Հերովդէս Բ-ին կողմէ: Յովհաննէս Մկրտիչ կատարել է յետոյ իր առաքելութիւնը կը միանայ մանուկներու կոտորուած երամին: «Օ՛, ի՞նչ խորունկ են Աստուծոյ առատ ողորմութիւնը, իմաստութիւնն ու գիտութիւնը: Որքա՞ն անհննելի են Անոր վճիռները, և անգննելի են Անոր ճամբաները: Եւ իրապէս,

***«Ո՞վ կրցաւ երբեք Տիրոջ միտքը կտրողալ, կամ ո՞վ երբեք խորհուրդը առաւ անոր. կամ ո՞վ ինչ առաւ անոր երբեք, որ փոխարէնը առնելիք ըլլայ անկէ»:*** Որովհետեւ ամէն ինչ իրմէ է, իրմով և իրեն համար գոյութիւն ունի: Յաւէտ փա՛րօք Իրեն: Ամէն»--Հոով. ԺԱ. 34-36:

Տիեզերքն համօրէն խորհրդանշումն է հոգեւորին: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան բացատրել Ձինք, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Ձինք: Խորհրդաբանողներ ու տեսաբաններ պետք է բիւրեղանան ու սրբանան իրենց հոգիով և դառնան անանձնական: Աստուած կ'երեւի հոգւոյն հորիզոնին վրայ, անձնուրացօրէն խնդրողին: Որքան մօտենաս հաւատքի սրտին, այդքան կ'ըմբռնես կեանքի խորհուրդը՝ զԱստուած: Խորհուրդը արտաքին զգալի նշանն է, որուն միջոցաւ տեսանելի ձեւերու տակ անտեսանելի շնորհները կը ստացուին:

*«Անհերքելիօրէն մեծ է աստուածապաշտութեան խորհուրդը՝ որ երեւցաւ Մարմինով (Մարմնացեալ Յիսուսով), արդարացաւ հոգիով, յայտնուեցաւ հրեշտակներու և, Բարոզուեցաւ հեթանոսներու և մէջ, հաւատալի եղաւ*

*աշխարհի մէջ և վերացաւ փառհով»*--Ա. Տիմոթ. Գ. 16:

Բոլոր առաքինութիւնները սահմանող, և դասակարգող մեծագոյն խորհուրդը **սէրն** է: Եկեղեցին՝ Սրբոց, մարտիրոսաց, վկայից ու նահատակաց գեղեցիկ ու գոհարավառ Ա. Խորհուրդն է, ա նցեալ ու ներկայ հաւատացեալներու հաւաքը: Մեռային անբարոյականութիւնը կը սրբապղծէ կեանքի սրբազան խորհուրդը: Հաւատացեալը պաշտպան կանգնելու է կեանքի սրբութեան: Սուրբ Հաղորդութիւն Տիրոջ Խօսքին, Մարմնին ու Արեան Խորհուրդի միացումն է, որ Պօղոս առաքեալ, նամակով կը ջանայ բացատրել Կորնթոսի Եկեղեցւոյ--Ա. Կորնթ. ԺԱ. 26, ըսելով.

**«Հետեւաբար, ամէն անգամ որ այս հացը կ'ուտէք  
և բաժակէն կը խմէք, Տիրոջ մահը պատմեցէք, մինչեւ  
Իր Երկրորդ Գալուստը»:**

Յիսուս Զրիստոսի Խորհուրդը գերբնական ուժերու հետ հաղորդուելու միջոցն է: Բոլոր հաւատացեալ քրիստոնեաները տնտեսներն ու մատակարարներն են Աստուծոյ խորհուրդներուն: Զրիստոնեայ հաւատացեալի մը տնտեսութիւնը կը նշանակէ *Ժառայութիւն* և իր ժամանակով իր պարգեւներով (տաղանդներով), իր ստացուածքով և իր անձով--Ղուկ. ԺԲ.42:

«Աստուծոյ Խօսքը կենդանի է և ազդու, աւելի հատու՝ քան որեւէ երկապրի սուր, և կը թափանցէ մարդուս ջուսնչին ու հոգիին մէջ, մինչեւ ողն ու ծուծը, և կը բննէ մտածումներն ու սրտին խորհուրդները: Եւ չկայ արարած մը որ Աստուծոյ տեսողութենէն վրիպի: Անիկա պարզ ու յստակ կը տեսնէ ամէն ինչ, իրենց ամբողջ մերկութեամբ: Եւ Անոր է որ հաշիւ պիտի տանք»--Եբր. Դ.12-13:

"Խորհուրդ" բառը կը նշանակէ, թէ քրիստոնեայ անհատը յարաբերութեան մէջ կը մտնէ անտեսանելի, անջօջափելի, բայց զգալի և իմանալի հոգեկան ուժերու և կարողութիւններու հետ: Յիսուս ըսաւ. «Ձեզի՛ տրուած է երկնքի արքայութեան խորհուրդները գիտնալ, իսկ անոնց տրուած չէ»--Մատթ. ԺԳ. 11, Մարկ. Դ. 10: "Խորհուրդ" բառը կը նշանակէ, թէ քրիստոնեայ անհատը յարաբերութեան մէջ կը մտնէ անտեսանելի, անջօջափելի, բայց զգալի և իմանալի հոգեկան ուժերու և կարողութիւններու հետ:

1. Հաւատացեալը կը մտնէ քրիստոսի ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և հոն կը մնայ, կ'ամբաւանջ կը վայելէ հոգեկան շնորհներ:
2. Խորհուրդով քրիստոնեան կ'ապրի երջանկութիւնը Աստուծոյ Ներկայութեան:
3. Խորհուրդը հանդիպումն է Աստուծոյ և մարդու
4. Զրիստոս է Հեղինակը իւրաքանչիւր խորհուրդին: Ամենուրեք՝ զգալի բայց աներեւոյթ՝ Ներկայութիւն:

*Խորհուրդը* կը կանխէ *խօսքն ու գործերը*, ամէն արարք գործ ըլլալէ

առաջ *խօսմ' է* և խօսքով արտայայտուելէ առաջ *խորհուրդ է*:

1. Խորհուրդն է մարդուն բուն էութիւնը:

2. Բարի խորհուրդին ակնադբիւրը Աստուած է՝ «Մի է Բարին որ է Աստուած», բարութեան Կատարելութիւնը:

«Աւետարանը յայտնութիւնն է Աստուծոյ փրկութեան ծրագրին, որ անցեալ բոլոր ժամանակներուն մէջ ծածուկ մ'նացած էր: Այժմ այդ խորհուրդը, մարգարէական գրութիւններով յայտնուած, մշտնջենաւոր Աստուծոյ հրամանով բոլոր ազգերուն ծանուցուեցաւ, որպէսզի ամէն ոք հաւատայ և հնազանդի Բրիստոսի»--Հոռմ. ԺԶ. 25-26:

"Խորհուրդ" բառը թարգմանութիւնն է յուն. "mysterion" բառին, որ կը նշանակէ ծածկուած կամ թափնուած բան: Լատին եկեղեցին զայն կ'արտայայտէ "sacramentum" բառով, որ կը նշանակէ սրբագործում և նուիրականացում իմաստով: Խորհուրդը ըմբռնելի չէ մարդկային զգայարաններով, սակայն տեսանելի է հոգեւոր աչքով՝ հաւատքով և իմացումով: Նոր Կտակարանի մէջ յիշելու է, որ գաղտնիք մը կամ խորհուրդ մը յայտնացուցուած է Բրիստոսի Հոգիով: Աստուած Ինքնաբացայայտութիւն է: Այն ինչ որ հեթանոսներ փնտռեցին իրենց ոլորապտոյտ պարերու ու թափնագիտական արարողութիւններու մէջ, Աստուած բացայայտեց Բրիստոս Յիսուսով Զինք *անձ նանուէ'ր* սիրողներուն:

Բոլոր հաւատացեալ Բրիստոնեաները տնտեսներն են Աստուծոյ խորհուրդներուն: Բրիստոնեայ հաւատացեալի մը տնտեսութիւնը կը նշանակէ *ժառայութիւն* իր ժամանակով, իր պարգեւներով (տաղանդ), իր ստացուածքով և իր անձով--Ղուկ. ԺԲ.42: Ազգեր կան, որ կը հպարտանան պատերազմներ ընելով, մենք հայերս կրնանք հպարտանալ մեր ըրած հոգեկան նուաճումներով: Հոգեկան մեծ "ափր" մը կատարեցինք թարգմանելով Աստուածաշունչը, որ հաւաքածոյ մըն է մարդկային բարեբերու և աստուածային խորհուրդներու:

Ճշմարիտ ուխտագնացութիւնը ո՛չ թէ սրբատեղի մըն է, այլ հոգեկան ուղեւորութիւն մը, որ խորհրդաբանողը ի՛նք խորագագ ոգիով կ'իրագործէ առանձնութեան մէջ աղօթելով: Մարմնացեալ աստուածայայտնութիւն Յիսուս, բացատրեց Սամարուհիին թէ ի՞նչ է աստուածապաշտութիւնը, ըսելով.--

**«Ո՛վ կին, հաւատա՛ ինձի, թէ ժամանակը կու գայ՝ երբ ո՛չ այս լերան վրայ և ո՛չ ալ Երուսաղէմի մէջ պիտի պաշտէք Հայրը: Բայց ժամանակը կու գայ և արդէն իսկ եկած է, երբ ճշմարիտ երկրպագուները հոգիով և ճշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը, որովհետեւ Հայրն ալ կ'ուզէ որ իր երկրպագուները այդպիսին ըլլան: Հոգի է Աստուած, և Անոր երկրպագուները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ**

**զԱյն պաշտեն»--Յով. Դ. 21-24:**

Խորհրդածելը և Խորհրդաբանելը կատարն են աստուածային ներկայութեան և փոխ յարաբերութեան: Մարդ արարածը կը հասնի այս բարձունքը, մի միայն աստուածային շնորհիւ՝ որպէս պարգեւ: Այս շնորհը կրնայ տրուիլ և կրնայ ետ առնուիլ: Խորհրդածութեան առաջնորդող մտածումը աղօթելն է: Զրիստոսի Եկեղեցին Աստուծոյ խորհրդանիշն է երկրի վրայ: Նենգամիս դիւանագիտութեան համար՝ արդարութիւնը եղած է մակերեսային բառ մը, և խորհրդանիշ՝ շահագործումի և խաբէութեան: Զաղափական կրկէսը կրֆայրոյց ռիւերու իր միջնորդորտով անհաջտ է Զրիստոսի կրօնի բնոյթին հետ, որ սիրոյ, եղբայրութեան, անխտրականութեան, արդարութեան և խաղաղութեան խորհրդանիշն է:

Խորհրդանշաններու հանդէպ երկիւղածութեան հասնող պաշտամունքով միայն կարելի է բացատրել Յիսուսի Բարոզութիւնները, պատուիրանները և հաւատքը: Խորհրդանշանները հեթանոսական պէտք չէ նկատել:

1. Մարդ արարած խորհրդանշո՛վ կը հասկնայ գերբնականը:
2. Յիսուս Զրիստոս մարդացաւ, դարձաւ տեսանելի ու շօշափելի:
3. Իր Մարմինը տուաւ որպէս նշխար, որպէսզի Զինք յիջենք և ըմբռնենք Իր չարչարանները, անարգանքները և մահը: Մենք եւս դառնալու ենք Իր խաչակիցները:
4. Յիսուս Զրիստոս միայն տեսութիւն մը իմաստասիրական խորհուրդ մը չէ՛, այլ մարմնաւորուած իսկութիւնն է:
5. Ա. Խաչն ու Ա. Հաղորդութեան նշխարը մեզ պէտք է խորհրդանշեն Իր սուրբ ներկայութիւնը և կրած չարչարանները:

Խորհրդապաշտ աղօթքն առ Աստուած նիւթն ու նիւթեղէնը, իմանալին ու պաշտելին միացնող թելն է, որ իմաստ կու տայ հաւատացեալի կեանքին: Ճատ մը նշանաւոր բնագէտներ կամ տիեզերաբաններ խորանալով իրենց մասնագիտութեան մէջ, սփանչացած են տիեզերքի հրաշալի կարգաւորութեամբ, խորհրդաւորութեամբ, գեղեցկութեամբ՝ մնալով աստուածապաշտ: Առանց միաստիփականութեան՝ կրօնք չկայ, ու Եկեղեցին չի՛ կրնար հոգիները վերացնել՝ եթէ չունենայ խորհրդաւորութիւն ու աստուածային ներշնչում: Եկեղեցին հոգեւոր կեանքի դպրոց մըն է, Բարոզիչը պիտի ջանայ հոգեւոր դաստիարակութեան ուսուցման գաղտնիքին տիրանալ, և հոգիները առինքնելու, ներշնչելու և վերացնելու շնորհը ունենայ՝ իր նպատակին հասնելու համար:

**Զրիստոսի հաւատացողը խզուելու է շուկայիկ  
և աշխարհիկ հաշիւներէ ու հաղորդուելու է  
Տիրոջ Յարութեան Խորհրդով:**

**Դեկտեմբեր 6, 2004--Թորոնթօ**